ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2020թ. թիվ 579-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2020 թվականի հունվարի 29-ին և 2020 թվականի հունիսի 18-ին հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ղեկավարի 31.07.2020թ. թիվ 035/290, ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 03.08.2020թ. թիվ 466, ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 04.08.2020թ. թիվ 670, ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ղեկավարի 30.07.2020թ. թիվ 469/22-2020, ՀՀ Լոռու մարզի Չկալով համայնքի ղեկավարի 04.08.2020թ. թիվ 197 գրությունները՝ ծրագրերի ավարտի մասին և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 06.08.2020թ. թիվ 7 որոշումը /կցվում է/՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ավարտված համարել Ծաղկաբերի համայնքապետարանի կողմից իրականացված «Ծաղկաբեր համայնքի մանկապարտեզի շենքի մասնակի նորոգում և տաղավարի կառուցում» ծրագիրը:

2. Ավարտված համարել Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից իրականացված «Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատի ավարտում, Բովաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում, նույն բնակավայրի բուժկետի շենքի հատակի վերանորոգում» ծրագիրը:

3. Ավարտված համարել Գյուլագարակի համայնքապետարանի կողմից իրականացված «Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը:

4. Ավարտված համարել Ախթալայի համայնքապետարանի կողմից իրականացված «Ախթալա համայնքի Ճոճկան և Փոքր Այրում գյուղերի գերեզմանատների ցանկապատում, տարածքների բարեկարգում» ծրագիրը:

5. Ավարտված համարել Չկալովի համայնքապետարանի կողմից իրականացված «Չկալով համայնքի գերեզմանատան ցանկապատի վերակառուցման աշխատանքներ» ծրագիրը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

8/7/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 6
ք.Վանաձոր